

## ՆԿԱՐԱԳԻՐ

### առաջարկվող ապրանքի ամբողջական

Էյչ Գրուպ ՍՊԸ-ն ԵՊՀ-ԷԱՃԱՊԶԲ-24/135 ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում  
Ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի		
	ապրանքային նշանը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
10	Համացանցով հեռարձակման լրակազմ	Համացանցով հեռարձակման լրակազմ	Անլար SDI/HDMI հաղորդչի լրակազմ՝ նվազագույն պարամետրերն են՝ Պրոֆեսիոնալ մակարդակի անլար SDI/HDMI հաղորդիչ է, որի միջոցով հնարավոր է մեկ հպումով հեռարձակում կազմակերպել Facebook Live, YouTube և այլ հայտնի առցանց հարթակներում: Թեթև և կոմպակտ հաղորդիչը պետք է հարմար լինի բացարձակապես ցանկացած տեսակի բջջային հեռարձակման համար և թույլ տա տեսանյութեր փոխանցել աշխարհի ցանկացած կետից: Այս անլար SDI/HDMI հաղորդիչը պետք է թույլ տա միավորել միանգամից մեկ շերտի մեջ 4 կապուղի (2 բջջային մոդեմ, Wi- Fi և LAN միացումներ)՝ օգտագործելով տվյալների փոխանցման բացառիկ արձանագրություն: Խանգարումակայուն կողավորման ալգորիթմ պարունակող այս արձանագրության շնորհիվ, հաղորդիչը ավտոմատ կերպով պետք է ապահովի տվյալների կայուն փոխանցում գործնականում ցանկացած պայմաններում. օրինակ՝ շարժման ժամանակ տեսանյութերի փոխանցում, հոսքային հեռարձակում մարդաշատ պայմաններում կամ հեռավոր վայրերից: Հաղորդիչը կարելի է միացնել ցանկացած

պրոֆեսիոնալ խցիկի (SDI կամ HDMI-ի միջոցով), ինչ պետք է թույլ տա Full HD տեսաազդանշանը ուղիղ առցանց փոխանցել շատ ավելի որակյալ, քան սմարթֆոններից տեսաազդանշանը: Օգտագործելով ամպային ծառայություններ՝ կարելի է հեռուստոյամբ կոնտենտը հեռարձակել կոնտենտի առաքման ամենատարբեր ցանցերում, ներառյալ YouTube Live, Facebook Live, Wowza, Ustream և այլն, օգտագործելով, Wi-Fi-ի կամ Ethernet-ի՝ երկու բջջային ցանցերի միջև առկա փոխկապակցված կապերը: Գործառույթներ Դյուրակիր հոսքային անլար կոդավորիչ հարմարեցված ցանկացած վայրից HD տեսաազդանշանի հոսքային փոխանցման համար՝ ամիջականորեն Facebook Live, YouTube, Twitter, Twitch և այլ հարթակներ: Բարձր պրոֆիլային H.264 AVC, 1080p 50/60/25/30/24, 1080i 50/60, 720p 50/60/25/30/24, PAL վիդեո կոդավորիչ: Կանգառում/գործարկում, տեսաազդանշանի նախադիտում, միացման վիճակի և ավտոնոմ աշխատանքի տևողության մոնիտորինգ ինչպես սարքի վրա, այնպես էլ վեբ պորտալում: Միաժամանակ մինչև չորս ցանցային կապուղու միացում, ներառյալ երկու 4G LTE կամ WiMAX բջջային մոդեմների ապահովումը, Wi-Fi և Ethernet: Վերալիցքավորվող ներքին մարտկոցը պետք է ապահովի մինչև երեք ժամ անդադար հոսքով հաղորդում: Հիմնական առանձնահատկություններ • Կոմպակտ, ունիվերսալ հոսքային լուծում • SDI և HDMI վիդեո մուտքեր • Միացում բջջային ցանցով, Wi-Fi-ի և Ethernet-ի միջոցով • Օգտագործում է ամպային ծառայություններ • Ցանցերի միավորում՝ տվյալների փոխանցման արագության մեծացման նպատակով • Փոքր ձևի գործոն Տեխնիկական բնութագրեր Անլար կապ Wi-Fi՝ Wi-Fi 4 (802.11n) Ինտերֆեյսեր Վիդեո մուտք/ելք՝ առնվազն 1 BNC մուտք (3G/HD/SD-SDI) 1 HDMI մուտք (HDMI 1.4) մուտքային ազդանշանի ավտոմատ որոշում Տեսաազդանշանի ապահովվող լուծաչափ՝ առնվազն 1080p50/60/25/30/24, 1080i50/60, 720p50/60/25/30/24, PAL Աուղիո ներանցում/արտանցում՝ առնվազն 1 ստերեո TRS 1/8"/3,5 մմ Այլ ինտերֆեյսեր՝ առնվազն 2 x Mini-USB 2.0 1 x RJ45 10/100 Ethernet Հաղորդակցման կապուղիների համատեղում

(bonding) Առնվազն 2 x USB մոդեմ, WiFi և Ethernet Ապահովվող ցանցային ստանդարտներ՝ առնվազն 4G LTE, HSPA+, HSUPA, HSDPA, UMTS, CDMA EVDO Rev 0/A/B, Mobile WiMAX և ներկառուցված Wi-Fi 802.11 a,b,g & n

Բոլոր նշված կապի տեսակները միավորված պետք է լինեն մեկ կապուղում Տեղային և հեռավար կառավարում Օգտագործելով տեղային կառավարումը, հնարավոր է գործարկել և դադարեցնել վիդեոյի հոսքային հաղորդումը: Վիդեոյի նախադիտման և տեսաազդանշանի արագությունը ստացման հնարավորությունն սարքի Էկրանին: Բազմաթիվ գործառնություններով հեռակառավարումն պետք է իրականացվի Web Portal համակարգի վեբ ինտերֆեյսի միջոցով: Սեփական ալգորիթմեր ներառող տվյալների փոխանցման բացառիկ արձանագրությունն ինչպես օրինակ տեսանյութերի հոսքային ադապտիվ հեռարձակման տեխնոլոգիան (ABR), աղմկակայուն կոդավորումը (FEC) և կորցրած փաթեթների վերականգման այլ ալգորիթմեր: Վիդեոյի կոդավորման արագությունը պետք է սահմանվի ավտոմատ կերպով: Տվյալների փոխանցման արձանագրությունն պետք է ապահովի մոտավորապես 5 վայրկյան առավելագույն հապաղում, որը մեղմացնում է հնարավոր խանգարումները եթերում: Ներկառուցված աուդիո SDI-ում և HDMI-ում Աուդիո և վիդեո կոդավորում առնվազն՝ Վիդեո՝ H.264 AVC high profile մինչև 5,5 Մբիթ/վրկ, Աուդիո՝ AAC-LC IP կոդավորում IP վիդեո H.264 դեպքում՝ առնվազն 1280 x 720-ից մինչև 1920 x 1080՝ 24p, 25p, 30p, 50i, 50p, 59.94i, 60p IP աուդիո՝ առնվազն AAC-LC Հաղորդման արձանագրություններ՝ առնվազն RTMP Միաժամանակյա հոսքեր՝ առնվազն 1 հոսք Համատեղելիություն PAL հեռարձակման համակարգի հետ Սնուցում Ներկառուցված կուտակիչ AC ադապտեր եվրոպական ստանդարտի հոսանքի լարով Գոտկակապով պայուսակ-պատյան Գոտիական պատյանը նախատեսված է ճամփորդելիս իրական ժամանակում վիդեոյի հոսքային հեռարձակման ընթացքում առավելագույն հարմարավետություն ապահովելու համար: Պայուսակում՝ հագեցված առնվազան երկու Y-մալուխներով (երկու հավելյալ մոդեմներ միացնելու համար), HDMI

		<p>մալուխով և ձգվող սեղմիչով, բավակաչափ տեղ է հատկացված մոդեմների, երթուղիչների և հիմնական մալուխների համար: Այս ճկուն պատյանը թույլ է տալիս պաշտպանել անլար SDI/HDMI հաղորդիչը և երկու մոդեմները, որոնք կարելի է ամրացնել առաձգական ժապավեններով: Այն գոտուն ամրացվող սեղմիչով է, որը թույլ է տալիս ամրացնել այն գոտուն պայուսակին կամ հանդերձանքին: Այս պատյանը մատակարարվում է հաղորդիչի հետ: Այն ունի նաև ներկառուցված կափարիչ SDI հարակցիչի համար:</p> <p>Մատակարարվող լրակազմ HD SDI/HDMI վիդեո/աուդիո կոդավորիչ Գոտու պայուսակ-պատյան AC ադապտեր հոսանքի լարով Մալուխ HDMI՝ մինի HDMI մալուխ (5ft) Ձախ անկյունային հարակցիչ USB 2.0 Type A «male» դեպի Type A «female» (6") Աջ անկյունային հարակցիչ USB 2.0 Type A «male» դեպի Type A «female» (6") / LiveU Solo SDI/HDMI Video/Audio Encoder, AC2DC009 AC/DC Adapter, Carry Pouch for LU Solo and LU200e կամ համարժեք վերոնշյալ պարամերերով</p>
--	--	---

## ПОЛНОЕ ОПИСАНИЕ

### предлагаемого товара

Эйдж Групп ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом БПЗ-БЦХЦПЗР-24/135 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар		
	товарный знак	наименование производителя	технические характеристики
10			